ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

ք.Երևան-10, Մ.Մկրտչյան 5.
հ
էլ. փոստ: secretariat@mineconomy.am
Վեբ կայք: www.mineconomy.am
Ֆ

№ Ջ/4303-2021
«24» 03 2021թ

«Ազուռ» ՍՊԸ-ի տնօրեն
Ա.Երիջանյանին

ԾԱՆՈՒՑՈՒՄ

Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին

ՀՀ էկոնոմիկայի նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) և «Ազուռ» ՍՊ ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) միջև 26.04.2021 թվականին կնքվել է ՀՀ ԷՆ-ԳՀԱՊՁԲ-21/20-160-21 ծածկագրով գնման պայմանագիրը:

Պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ «Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար»:

Պայմանագրի հավելված 1-ի տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն՝ 6-րդ, 7-րդ, 11-րդ, 13-րդ և 16-րդ չափաբաժինների համար ապրանքի մատակարարման ժամկետ է սահմանված երկրորդ եռամսյակը:

Պայմանագրի 2.1.1 կետի համաձայն «Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 30 օրից ավելի»:

Հիմք ընդունելով պատասխանատու ստորաբաժանման կողմից 09.09.2021թվականին ներկայացված թիվ Ն/4118-2021 զեկուցագիրը, պայմանագրի 2.1.7 կետը, 2.1.7.1 կետի բ ենթակետը և Քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասը, միակողմանի լուծել Նախարարության և Ընկերության միջև 26.04.2021 թվականին կնքված ՀՀ ԷՆ-ԳՀԱՊՁԲ-21/20-160-21 ծածկագրով գնման պայմանագիրը 6-րդ, 7-րդ, 11-րդ, 13-րդ և 16-րդ չափաբաժինների մասով: Պատշաճ ծանուցումն ապահովելու համար կկիրառվի ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները:

Ընկերության կողմից, որպես պայմանագրային պարտավորությունների պատշաճ կատարման ապահովում ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները (տուժանքի մասին համաձայնագրերը՝ հավելված 4.2 և հավելված 5.1) կից վճարման

պահանջագրերի հետ միասին, սահմանված կարգով, կներկայացվեն «Ակբա բանկ» ԲԲԸ տուժանքի մասին համաձայնագրերով սահմանված գումարները ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչության 900008000664 հաշվեհամարին փոխանցելու նպատակով:

Ընկերության տվյալները օրենքով սահմանված կարգով կներկայացվեն լիազորված պետական մարմին «Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով:

Հարգանքով՝

X _____ ԱՐՄԵՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Կատարող՝
Խորհրդական, Գոհար Ապրիկյան
011597223